

# ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

112

ՀՀ ՍՓՅՈՒՌԵԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

## Մփյուռքի ներկայացուցիչներ

Հայր երեխայի երգ ու պարով հպարտանում, բայց հայկական դպրոց տանելու մասին չի մտածում

Գալուստ Տրապիզոնյան. «Յուրաքանչյուր հայ պետք է ամեն ինչ անի ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Արցախի զարգացման համար»

## Վերասպարթյուններ

ԹԱՄԱՐՆ ԻՐՈՔ ԶԻ ՅՈՒՐԱՑՐԵԼ ՄԻԼԻՈՆԸ, ԲԱՅՅ ՀԱԿԱՌԱԿ ԻՐ ԿԱՄՔԻՆ

ՏԱԳՆԱՊԸ ՀԱՄԱՎ ՄԻՐԻԱ, ԱՅՄԻՆՔՆ ՆԱԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

«ՄԵԿ ԹԱՄԱՐ, ՄԵԿ ԱԶԳՈՒՏԱԿ»-Ի ԹԱՄԱՐԸ ՄԱՏԸ ՄՏՑՐԵԼ Է ՄԵՂՎԻ ԲՈՒՆԸ

## Հայրենադարձներ

Հայրենիքում՝ Հայրենիքի համար



Մփյուռքի ներկայացուցիչներ

Հայր երեխայի երգ ու պարով հպարտանում, բայց հայկական դպրոց տանելու մասին չի մտածում

2011-04-14

- Ե՞րբ է ձեռավորվել Տոմսկի հայկական համայնքը:

- Տոմսկի հայկական համայնքը ստեղծվել է 1993

թվականին եւ միայն 2004 թվականին պաշտոնապես գրանցվել որպես «Տոմսկի շրջանի հայերի միության Տոմսկի ռեզիդենտ հասարակական կազմակերպություն»: Մեր համայնքը Միբիրի լավագույն համայնքներից մեկն է:

**- Ինչո՞վ է արտահայտվում դա:**

- Համայնքին անհրաժեշտ ենթակառուցվածքները համատեղ են գործում եւ ծրագրերն էլ նույն կերպ ենք իրականացնում: Ունենք հայկական մատուռ: Այն գտնվում է քաղաքի մուտքի մոտ, եւ առաջինը, ինչ տեսնում ենք քաղաք մտնելիս՝ մատուռն է: Համայնքում գործում է նաեւ կիրակնօրյա դպրոց: Ունենք պարի անսամբլ. «Նաիրի» ենք կոչել, եւ այն արդեն որոշակի ճանաչում ունի, երկու տարբեր մրցույթներում գրան-պրի է շահել՝ շնորհիվ պարուսույցների

աշխատանքի, 70 աշակերտների աշխատասիրության եւ համայնքի ուշադրության: Մեր համայնքում գործում է նաեւ «Արաքս» երգի խումբը: Արդյունքում մեր սեփական ուժերով կարող ենք անցկացնել 5 ժամանոց համերգ: Դա հնարավորություն տալիս բոլոր ազգային ու եկեղեցական տոները մեծ շուքով նշելու:

**-Իսկ ի՞նչ կարգով եւ ծրագրով է գործում կիրակնօրյա դպրոցը:**

-Երկար էի մտածում, թե ինչպես կարելի է համախմբել հայերին եւ հասկացա, որ պետք է դպրոց ստեղծել: Չէ՞ որ հայությունը մի թուլություն ունի՝ երեխաները: Գնացինք 16-րդ գիմնազիա, որտեղ կան ուկրաինական, բելառուսական դասարաններ: Մենք էլ որպես քրիստոնյա դիմեցինք մեր դասարանները ունենալու համար: Սկզբում չորսն էին, հիմա մնացել են երեքը: Սկիզբ շատ լավ էր. ժողովրդի մեջ ոգևորությունը մեծ էր: Ավելի քան 100 երեխա էր այցելում դպրոց: Իսկ հիմա նրանց թիվը դարձել է 60: Դպրոցում եռամյա կրթություն է: Այն գործում է մեր ուսումնական ծրագրով: Երեխաներ, որոնք դեռեւս ոչ մի անգամ չեն եղել Հայաստանում, հայերեն են գրում եւ կարդում: Տոմսկի հայկական կիրակնօրյա դպրոցում ներկա պահին օտարգզի աշակերտներն էլ են սովորում: Հայերեն սովորողների մեջ շատ են ռուս աղջիկներ, ովքեր ունեն հայ ընկերներ. վրացիներ եւ մուսուլմաններ էլ կան: Մեզ մոտ հայերեն էր սովորում անգամ Տոմսկի պետական համալսարանի դասախոսներից մեկը: Ի տարբերություն այս իրողության, կան հայեր, ովքեր նախընտրում են իրենց երեխաներին տանել չինական ու այլ դպրոցներ՝ մեկնաբանելով, թե այնտեղ առաջընթացն ավելի մեծ է: Մենք էլ, նման բաներն հաշվի առնելով, որոշել ենք այս տարի մի նոր կարգ սահմանել. այն երեխան, ով չի հաճախում հայկական դպրոց, չի կարող հաճախել նաեւ պարի եւ երգի խմբակ:

**-Իսկ այդ կարգը չի՞ նպաստի, որ երգ ու պարի խմբակներ էլ չգան:**

-Կարծում եմ՝ չէ, քանի որ յուրաքանչյուր հայ հպարտանում է, երբ իր երեխան գեղեցիկ է պարում կամ երգում, ու չնայած դրան, չի մտածում երեխային հայկական դպրոց ուղարկելու մասին:

**-Համայնքում աշխատելը հավանաբար որոշակի դժվարություններ է առաջ բերում:**

**Քանի՞ տարի է, ինչ ղեկավարում եք Տոմսկի հայկական համայնքը:**

-Ռուսաստանում աշխատանքս սկսել եմ որպես շարքային ծառայող եւ հասել մինչեւ գնդապետի կոչման ու ներքին գործերի վարչության պետի տեղակալի պաշտոնին: Եւ երբ թոշակի անցա, առաջարկեցին ղեկավարել համայնքը՝ մեկ տարի աշխատելու մտադրությամբ: 2003 թվականին ստանձնեցի

այդ գործը, բայց որոշ ժամանակ անց հասկացա, որ աշխատանքն ինձ դուր է գալիս եւ կարողություններս էլ, որ 32 տարի Ռուսաստանին եմ ծառայեցրել, հիմա հարկավոր է ծառայեցնել հայրենիքիս: Ինչ մնում է աշխատանքին, ապա այն դժվար է: Հատկապես դժվար է հայությանը մեկտեղելը: Երբ ասում ես ժողով պետք է անենք, ասում են՝ ժամանակ չկա, բայց երբ ասում ես՝ եկեք խաշ-խորովածի, ժողովն անպայման ստացվում է:

**-Համայնքը Տոմսկի հայությանը մեկտեղող ավանդույթներ ունի՞:**

-Բոլոր ազգային ու եկեղեցական տոները հենց այդպիսին են մեզ համար: Բացի այդ, յուրաքանչյուր ամսվա 24-ին անց ենք կացնում համայնքի խորհուրդ: Ինչո՞ւ 24-ին. դա Հայոց ցեղասպանության միլիոնավոր զոհերի ոգեկոչման օրն է: Հենց դա էլ նպաստում է, որ ոչ ոք չմոռանա, եւ բոլորը ներկա գտնվեն խորհրդին: Բայց կազմակերպում ենք նաեւ ժամանցային ու սպորտային միջոցառումներ եւ մրցույթներ՝ «Միսս Հայաստան», նաեւ՝ նարդու, ֆուտբոլի, շախմատի մրցույթներ: Վերջինը համայնքների միջեւ էր հայտարարված, եւ մասնակից 26 խմբերի մեջ մենք՝ հայկական խումբը, զբաղեցրինք երրորդ տեղը:

**-Տոմսկի ազգային փոքրամասնությունների հետ խնդիրներ, համագործակցություն կա՞:**

-Տոմսկի շրջանում գրանցված է ավելի քան 22 ազգային փոքրամասնություն: Դա չի խանգարում միմյանց հետ համերաշխ ապրելուն: Նահանգապետի նախաձեռնությամբ ստեղծվել է գործում է ազգային փոքրամասնությունների կոմիտե: Այդ կառույցում պատասխանատու եմ օրենսդիր մարմինների եւ կառույցի կապը ապահովելու գործում: Ասեմ, որ համայնքի ներկայացուցիչների աջակցությամբ իրականացման ընթացքում է ազգամիջյան բարեկամության հուշարձանի ստեղծման մտահղացումս: Վանաձորում արդեն քանդակում են հուշարձանը. այն խաչքար է լինելու եւ կտեղադրվի Տոմսկի կենտրոնական մասում ապրիլի 22-ին՝ Ռուսական դրոշի օրը:

**-Նկատելի՞ է Տոմսկի հայ համայնքի ներգավվածությունը հասարակության կյանքում եւ երկրի զարգացման գործում:**

-Կարծում եմ՝ նկատելի է, եւ նույնիսկ կարող եմ ասել, որ հիմա արդեն երեւան են գալիս ինտելիգենցիայի ներկայացուցիչներ՝ բժիշկներ, իրավաբաններ, ովքեր նաեւ օրենսդիր դաշտում են աշխատում, ավելի քան 70 բուհավարտ երիտասարդներ եւ չորս հայ պատգամավոր կա Տոմսկի շրջանում:

**-Համայնքի առաջիկա ծրագրերն ինչպիսի՞ն են:**

-Մի ամբողջ ամիս՝ Տոմսկում հայկական մշակույթի օրերի շրջանակում, ներկայացնելու ենք հայկական մշակույթը, երգն ու պարը, կազմակերպելու ենք տարբեր ցուցահանդեսներ: Միջոցառումը տեղի է ունենալու մայիսին եւ իրականացման համար Տոմսկի նահանգապետը 50 հազար ռուբլի է տրամադրել: Եւ որ ամենակարեւորն է, հաճախ ու հետեւողականորեն խոսելու ենք Հայոց ցեղասպանության մասին: Ի դեպ, նախաձեռնությունը հենց նահանգապետինն է:



## **Գալուստ Տրապիզոնյան.**

### **«Յուրաքանչյուր հայ պետք է ամեն ինչ անի ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Արցախի զարգացման համար»**

2011-04-13

**-Որքա՞ն ժամանակ է, որ գոյություն ունի Արխագիայի «Կռունկ» մշակութային հայկական համայնքը:**

-Արխագիայի հայկական համայնքը կազմավորվել է 1989 թ-ն: Առաջին ղեկավարը եղել է Ալբերտ Թոփայանը, ով այն ժամանակ նաեւ գերագույն խորհրդի փոխնախագահն էր: Ռեզոլուցիայի գործողություններից հետո Արխագիայի հայկական համայնքի երկրորդ համագումարի ժամանակ՝ 1994 թվականին, ես ընտրվեցի նախագահ եւ ղեկավարում էի համայնքը 11 տարի: 2003 թվականին ստեղծվեց Հայկական մշակութային կազմակերպությունը, «Մաշտոց» ընկերությունը եւ «Կռունկ» հայկական համայնքը: Հետո որոշեցինք ստեղծել համընդհանուր հայկական համայնք՝ միայն մեկ համայնքապետով: Այն հիմնվեց 2007 թվականին: Հիմա համայնքի նախագահն է Սուրեն Կերսեյանը: Կան մի քանի փոխնախագահներ, որոնցից մեկը ես եմ:

**-Ե՞րբ ներգրավվեցիք համայնքային կյանքում:**

-Ես ծնվել եւ մեծացել եմ Արխագիայում: Ուկրաինա մեկնեցի սովորելու նպատակով: Հետո սկսվեց պատերազմը, եւ ես վերադարձա Արխագիա: Ինչպես Արխագիայի մնացած բնակիչները, այնպես էլ ես բացառություն չկազմեցի. մասնակցեցի պատերազմին՝ պաշտպանելու մեր տները, ընտանիքները, հայրենիքը: Մասնակցել եմ բոլոր մարտական գործողություններին՝ ինչպես արխագիական զինվորական կազմավորումներում, այնպես էլ Մարշալ Բադրամյանի անվան հայկական գումարտակում: Պատերազմից հետո նշանակվեցի Արխագիայի կրթության փոխնախարար: Այդպիսով սկսվեց համագործակցությունը հայկական համայնքի հետ: Ինձ հաջողվեց պահպանել 39 հայկական դպրոցներ՝ այն, ինչ պատերազմից հետո էր մնացել, նաեւ որոնք քանդվել, կործանվել էին: Արխագիայի կրթության նախարարությունում երկու տարի աշխատելու ընթացքում կարողացա նաեւ հարաբերություններ հաստատել ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ, որպեսզի ապահովենք

դպրոցները դասագրքերով: Աբխազիայում, ինչպես Ղարաբաղում, բոլոր առարկաները դասավանդվում են հայերեն լեզվով: Ամենակարեւորը, որ առաջին դասարանցիները Այբբենարանով են սովորում հայերեն:

**-Խնդիրներ կա՞ն հայկական համայնքում:**

-Քանի որ միակ կապը Հայաստանի հետ օդային ճանապարհն է, ծնողները սկսեցին իրենց երեխաներին ռուսական դպրոցներ տանել, որպեսզի ընդունվեն ապագայում Ռուսաստանի բուհեր: Դա ավելի հասանելի է եւ մոտ: Ցավալի է այն փաստը, որ 39 հայկական դպրոցներից մնացել է միայն 32 դպրոց: Պատճառը դպրոցների փակումը չէ, այլ երեխաների բացակայությունը դպրոցից. այսինքն՝ աշակերտներ չունենք: Հիմա մենք պետք է անենք ամեն ինչ՝ պահպանելու հայկական դպրոցները: Երբ ես նշանակվեցի փոխնախարար, դեմ էի, որ դպրոցում առարկաները թարգմանվեն եւ դասավանդվեն ռուսերենով: Բայց հիմա ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հովանու ներքո առաջին անգամ կկազմակերպվի կլոր սեղան-քննարկում Աբխազիայի բոլոր հայկական դպրոցների տնօրենների եւ ուսմասվարների մասնակցությամբ: Այսօր ռուսական դպրոցներում սովորում են ավելի քան 8700 հայ աշակերտներ, իսկ հայկական դպրոցներում 2200 աշակերտ: Հիմա վերանայում ենք ուսումնական համակարգը. ուսումնական ձեռնարկներն անհրաժեշտ է թարգմանել ռուսերեն: Ֆիզիկան, քիմիան, գծագրությունը հայկական դպրոցներում կդասավանդվի ռուսերենով, իսկ հումանիտար առարկաները՝ հայերենով: Սա նաեւ կօգնի Հայաստանում բուհ ընդունվողների թիվը մեծացնել: Հայաստանում բուհ ընդունվում են Աբխազիայի շրջանավարտների ընդամենը 5%-ը, մնացածը սովորում են կամ Աբխազիայում կամ Ռուսաստանում: Մենք հայ շրջանավարտներին հորդորում ենք ընդունվել ՀՀ բուհեր: Ծնորհիվ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության՝ մեզ համար արված բացառությունների, Հայաստանում սովորող ուսանողների թիվը քիչ ավելի մեծացել է:

**-Ինչպիսի՞ մշակութային եւ հայապահպանման ծրագրեր եք իրականացնում համայնքի համար:**

-Շատ կարճ ժամանակում կարողացանք կառուցել եկեղեցի. վերջերս տեղի ունեցավ խաչի օրհնության արարողությունը, որից հետո այն տեղադրեցինք եկեղեցու գմբեթին՝ 27 մետր բարձրության վրա: Նախագիծը ընդունվել էր դեռ 2010 թվականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից: Եկեղեցու առաջ ներկայումս կառուցվում է ծառուղի՝ նվիրված Աբխազիայի պատերազմում ընկած հայկական գումարտակի հերոսամարտիկներին՝ նրանց, ովքեր կյանքը տվեցին Աբխազիայի ազատության համար: Զոհվածների նկարները զետեղված կլինեն մարմարից եւ գրանիտից սալիկների վրա, որոնք կտեղադրվեն ծառուղում: Եկեղեցու

յուրաքանչյուր այցելու կանցնի ծառուղով՝ հարգանքի տուրք մատուցելու ընկալման համար:

**-Ի՞նչ համագործակցության եզրեր կան Հայաստանի հետ:**

-Շատ սերտ հարաբերությունների մեջ ենք ՀՀ սփյուռքի եւ կրթության ու գիտության նախարարությունների հետ, ինչպես նաեւ Արցախի հետ: Ես շատ հաճախ եմ եղել Արցախում, եւ հարաբերությունները եւս սերտ են: Ակտիվ մասնակցում ենք նաեւ Հայաստանում կազմակերվող միջոցառումներին: Անցած տարի Արխազիայի երիտասարդներից լավագույն ներկայացուցիչները մասնակցեցին ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրին: Մասնակցությունից հետո երեխաները պատմում էին իրենց տպավորությունները բոլոր երիտասարդներին, ովքեր չէին եղել ծրագրին: Դա շատ կարեւոր է, քանի որ յուրաքանչյուր հայ ապրում է՝ իր հոգում ունենալով Հայաստանը: Անցած տարվա մասնակիցներից երեքը այս տարի գալիս են Հայաստան՝ ընդունվելու բուհ: Սա էլ մի ճանապարհ է. Արխազիայի հայկական դպրոցի շրջանավարտներին ուղղորդել դեպի հայկական բուհեր՝ դրանով իսկ ստեղծելով ավելի մտերիմ ու սերտ հարաբերություններ Հայրենիքի հետ:

**-Առաջանո՞ւմ են խնդիրներ Արխազիայում ապրող ազգային փոքրամասնությունների հետ:**

-Արխազիայում ապրող հայերի 70%-ը ծագումով Արեւմտյան Հայաստանից են: Այսինքն՝ Ցեղասպանությունից հետո մեզ ընդունել եւ պահել են այնտեղ: Մենք այնտեղ ժամանակավոր բնույթ կրող ազգ չենք. այն մեր Հայրենիքն է: Անմասն չենք մնացել մեր Հայրենիքի պաշտպանության հարցում՝ ապացուցելով մեր՝ Արխազիայի արժանավոր քաղաքացի լինելու փաստը: Պատերազմում հանուն Արխազիայի ազատության ընկել են մոտավորապես 200 հայեր՝ մեր եղբայները: Նրանց մահը մեզ իրավունք եւ հնարավորություն է տալիս Արխազիայում մեզ զգալու հարմարավետ եւ հանգիստ: Նույնիսկ ֆիլմ կա՝ Հայկական գումարտակի մասին նկարված: Այնտեղ էլ նշված է, որ հայկական գումարտակը միակ միաստարր ազգային գումարտակն էր, որ մասնակցում էր պատերազմին: Ֆիլմը նկարահանվել է գերմանացիների կողմից: Գրվել է նաեւ գիրք «Հայկական գումարտակ» վերնագրով: Ամենադժվար պատերազմական գոտիներում կռվին մասնակցել է հայկական գումարտակը: Իմ ղեկավարությամբ գրավեցինք անհաղթահարելի ստրատեգիական կետը, ինչի համար ես ստացա հերոսի կոչում: Գումարտակում կային Արխազիայի այլ հերոսներ նույնպես: Այսօր չենք էլ մտածում, թե կարող են խնդիրներ առաջանալ ազգային հողի վրա: Անթույլատրելի է. չի եղել ու չի կարող լինել, որովհետեւ մեզ տրված է իրավունք ապրելու այնտեղ: Համարյա բոլոր կառավարական աստիճաններում հայեր կան: Մենք շնորհակալություն ենք հայտնում կառավարությանը ջերմ

հարաբերությունների եւ վերաբերմունքի համար: Բացի այդ, մեր եւ արխագների ճակատագիրը շատ նման է: Արխագիայում ապրում են ընդամենը 100 000 արխագներ, իսկ դրսում՝ 500 000: Ես ուզում եմ նաեւ Արցախին մաղթել զարգացում եւ ինքնավարության ճանաչում, ինչպես որ Արխագիան ունեցավ: Յուրաքանչյուր հայ պետք է ամեն ինչ անի ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Արցախի զարգացման համար:



Վերատպություններ

## **ԹԱՄԱՐՆ ԻՐՈՔ ՉԻ ՅՈՒՐԱՑՐԵԼ**

### **ՄԻԼԻՈՆԸ, ԲԱՅՑ ՀԱԿԱՌԱԿ ԻՐ**

#### **ԿԱՍՔԻՆ**

2011-04-16

Մնում է ավելացնել, որ իսկապես Թամար Պողոսյանը ստիպված կլինի պայքարել իրավական

հարթությունում, սակայն դա հազիվ թե իր ակնարկածը լինի: Իր բողոք-նամակների հետքերով ստուգումների մասին նախնական տեղեկությունները ոչ մի լավ բան չեն խոստանում: Այսպես, մեր տեղեկություններով, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամը 2008-2010 թթ. ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացրել հետեւյալ բոլոր ուղղություններով՝ հրատարակչական գործ, համերգային գործունեություն, տեղեկատվական կրիչների վերարտադրում, ժողովրդական համալսարանների գործունեություն, ցուցահանդեսների կազմակերպում: Սակայն Թամարի համար ավելի տխուր թվեր ու փաստեր ունենք ձեռքի տակ:

Կան ոլորտը կարգավորող իրավական ակտերի որոշ դրույթների անհամապատասխանությունների եւ կանոնադրական գործառույթների ոչ լիարժեք կատարման ապացույցներ, մենք կանդրադառնանք հատկապես ֆինանսական կողմին: Հիմնադրամը 2008 թվականին ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է 93,1 միլիոն դրամով. այդ թվում՝ 13,7 միլիոն դրամ աշխատավարձ ¥1,5 միլիոն պարգևավճարք, ծրագրերի հաշվին՝ 6,5 միլիոն դրամ: 2009 թվականին ֆինանսավորվել է 21,2 միլիոն դրամով, որից աշխատավարձ՝ 15,5 միլիոն դրամ ¥1,8 միլիոն պարգևավճարք, ծրագրերի հաշվին՝ 185 հազար դրամ: Հատկանշական է, որ 2009՝ ոչ փառատոնային տարում, հիմնադրամը հանգիստ շարունակել է աշխատել նույն հաստիքացուցակով, այսինքն՝ վարձատրել է չեղած միջոցառումների իրականացման համար: 2010 թվականին հիմնադրամն արդեն գործել է սփյուռքի նախարարության հետ կնքված պայմանագրերի շրջանակներում. 195,7 միլիոն դրամից 15,8-ն ուղղվել է աշխատավարձերի վճարմանը, 1,2-ը՝ պարգևավճարների, իսկ կատարված ծրագրերի համար՝ 4,5 միլիոն դրամ հավելավճար է հատկացվել:

Տնօրենի հրամանով առավել բարձր պարգևավճարներ եւ հավելավճարներ են

ստացել տնօրեն Թամար Պողոսյանը, գեղարվեստական ղեկավար Արմեն Մանուկյանը, աշխատակազմի ղեկավար, համատեղության կարգով նաև գանձապահ Ֆելո Թամարի քույր՝ Քնարիկ Պողոսյանը, արտաքին հարաբերությունների գծով գլխավոր մասնագետ Զարուհի Դադայանը Կհամատեղության կարգով՝ Թամարի բարեկամուհին, որը փետրվարին ազատվել է աշխատանքից: 2010 թվականին հիմնադրամի գործադիր տնօրեն Թամար Պողոսյանի կողմից լիազոր մարմնին՝ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին է ներկայացվել 5.083.972 դրամ հավելավճարի հաշվարկ, որը չի ընդունվել եւ չի վճարվել: Հենց այս 5 միլիոնը յուրացնելու լուրերն էր հերքել երեկ Թամարը: Իհարկե ճիշտ է ասել Թամարը՝ չի յուրացրել 5 միլիոն, բայց իրենից չկախված հանգամանքների բերումով. պարզապես Հրանուշ Հակոբյանը փողը չի տվել:

Եվ վերջում. «պայքարն իրավական հարթություն փոխադրող» Թամար Պողոսյանին խորհուրդ կտանք ձեռքաշել կառավարությանը դատի տալու մտքից, որովհետեւ վարչապետի վերահսկողական ծառայության արձանագրած փաստերի հետ կատակ չեն անում:

## ԿԱՐԻՆԵ ԱՇՈՒՂՅԱՆ

### Չորրորդ Ինքնիշխանություն



## ՏԱԳՆԱՊԸ ՀԱՍՏԱՎ ՍԻՐԻԱ, ԱՅՍԻՆՔՆ ՆԱԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

2011-04-16

Դրրաա, Լաթաքիա, Բանիաս սիրիական քաղաքներից հետո խռովությունները երեքշաբթի օրը հասան նաև մինչ այդ հանդարտ ու հանգիստ Հալեպ հնագույն քաղաքը, որտեղ մահմեդական ու քրիստոնյա տարբեր համայնքների հետ ապրում են նաև մեր բազմահազար հայրենակիցներ իրենց եկեղեցիներով, դպրոցներով, ազգային, մշակութային, բարեգործական հաստատություններով ու կազմակերպություններով: Ապրում են որպես երկրի լիարժեք քաղաքացիներ՝ սիրիական մշակույթի ու տնտեսության մեջ իրենց կայուն ներդրումներով:

Անշուշտ, ինչպես արաբական երկրներից շատերում—Թունիս, Եգիպտոս, Բահրեյն, Հորդանան, Մարոկկո, Եմեն ու Լիբիա—Սիրիայում էլ կուտակված նմանատիպ շատ հարցեր կան՝ քաղաքական, սոցիալական եւ այլ բնույթի: Բայց ինչպես ասում են արեւմտյան քաղաքագետները՝ անալոգիաները բնավ ամբողջությամբ իրար չեն համապատասխանում: Յուրաքանչյուր հեղափոխություն կամ հասարակական ընդվզում ունի իր եւ միայն իրեն հատուկ պատճառները, առաձնահատկությունները: Սիրիան արտաքին միջամտության համար ունի այլ «գրավչություն»: Արաբական աշխարհում Սիրիան այն միակն երկիրն է, որ 1948 թ.-ից ի վեր տեւական պատերազմական վիճակի մեջ է գտնվում



Իսրայելի հետ, որը հաջորդական 4 պատերազմներից հետո դեռևս գրավման տակ է պահում Գոլանի բարձրավանդակը: Երկրորդը՝ Արաբական աշխարհում Դամասկոսը Թեհրանի միակ բարեկամն է Իսրայելի դեմ իր պայքարում եւ ընդհանրապես: Ահա այս երկու հանգամանքները այդ երկիրը դարձնում են Իսրայելի ու նրա արեւմտյան դաշնակիցների համար գլխավոր թիրախ:

Հասարակական կարծիքը Հայաստանում ընդհանրապես տեղեկատվական առօրյա իր սնունդն ստանում է արեւմտյան աղբյուրներից, ավելի ճիշտ՝ միջնորդավորված նրանցից: BBC, CNN, Euronews, «Ալ Ջազիրա» եւ մյուսները նման պարագաներում գրեթե միշտ կողմնակալ են եւ նպատակաուղղված, հետեւաբար՝ միակողմանի: Այդ միակողմանիության մեջ բնականաբար չի երեւում Սիրիայում վերջին 3 շաբաթներում պատահող խռովությունների լրիվ, ամբողջական պատկերը: Այդ երկրում ավելի քան 40 տարուց ի վեր ընդհատակյա գործում է «Մուսուլման եղբայրների» ամենակատաղի թեւերից մեկը, որին շուրջ 30 տարի առաջ դաժանորեն պատժեց հանգուցյալ նախագահ Հաֆեզ Ասադը: Այդ կազմակերպությունը հիմա ամենակատաղի հակառակորդն է նախագահ Բաշար Ասադին ու նրա իշխանությանը: Այս օրերին «Մուսուլման եղբայրները» շատ աշխույժ են ու վտանգավոր, մանավանդ որ զինված են ու հանդուգն: Երկրի տարբեր քաղաքներում նրանք իրականացնում են անվտանգության ուժերի դեմ զինյալ գործողություններ, հրահրում ազգաբնակչության մեջ գոյություն ունեցող ապրուստի եւ ազատությունների սահմանափակման դեմ բնական դժգոհությունները:

Իրերի այս կացության մեջ բնականաբար մեր առաջին մտահոգ հայացքը պետք է ուղղվի դեպի այս երկրում եւ հարեւան Լիբանանում ապրող (վերջինիս արդեն փխրուն վիճակը մեծապես կախյալ է առաջինի կացությունից) հայությանը: Սիրիահայությունը ներկա ռեժիմի պայմաններում հանգիստ եւ ապահով է զգում իրեն եւ ունի զարգացման հեռանկարներ թե՛ ազգային, թե՛ անհատական-տնտեսական առումով: Որեւէ փոփոխություն, մանավանդ կրոնական ֆունդամենտալիզմի դրսեւորմամբ, սպառնում է արտագաղթի մղել Հալեպի, Դամասկոսի, Քամիշլիի, Լաթաքիայի ու Քեսաբի հայությանը, ոչնչացնել հայաշունչ մեր ամենակարեւոր գաղթօջախներից մեկը, իր հերթին բոլորովին անորոշ ապագայի մատնելով հարեւան Լիբանանի հայագաղութը՝ սկսյալ սահմանագլխին գտնվող Այնճար հայկական գյուղից:

Երկրորդ՝ տարածաշրջանում Սիրիան մեր երկրի՝ Հայաստանի հուսալի բարեկամներից է, որը լավ հարաբերություններից բացի միջազգային կազմակերպություններում բնավ չի քվեարկում մեր երկրի դեմ:

Երրորդ՝ Սիրիայում որեւէ փոփոխություն, մանավանդ իսրայելական կամ արեւմտյան խարդավանքով, բերելու է Թեհրանի ազդեցության թուլացմանը այդ

երկրում, ավելի լայն բացելով տարածքը թուրքական նորանոր ներթափանցումների առաջ, ինչը լրջագույն սպառնալիք է մեր երկրին տարածաշրջանային հարաբերությունների տեսակետից:

Իհարկե, ոչ Հայաստանը եւ ոչ էլ հայությունը ի վիճակի չեն ազդու ներգործություն ունենալ Սիրիայում տեղի ունեցող զարգացումների վրա: Մակայն կարող ենք բարոյապես զորակցել, ինչպես նաեւ ազգային շահերի գիտակցությամբ մոտենալ այնտեղ ծավալվող իրադարձություններին եւ այդ, միայն ա՛յդ տեսանկյունից գնահատել դրանք:

Պատրանքներ չունենանք. ողջ աշխարհը, ամենաթույլ երկրից մինչեւ ամենաուժեղը, դեկավարվում են միայն իրենց ազգային շահերով: Մենք պետք է վարվենք նույնպես:

Մաղթենք, որ Սիրիայի իշխանություններին ի վերջո կհաջողվի հիմնարար բարեփոխումներով եւ միաժամանակ կարգուկանոնի եւ արդարության վերահաստատումով ներքին խաղաղությունը վերադարձնել այդ երկրին:

### Հակոբ Ավետիքյան



## «ՄԵԿ ԹԱՄԱՐ, ՄԵԿ ԱԶԳՈՒՏԱԿ»-Ի ԹԱՄԱՐԸ ՄԱՏԸ ՄՏՏՐԵԼ Է ՄԵՂՎԻ ԲՈՒՆԸ

2011-04-15

Հիմա ամեն ինչ տանում է նրան, որ Թամարը վերադառնա «հին տաշտակին», որովհետեւ նախա-նախարարական տարիները նրա մեջ ձեւավորել են կայուն սովորույթներ: Պարզվում է՝ վատ սովորույթներ: Թամարը մի ուրիշ ձեւի է կատաղել՝ նա բողոքներ է գրել եւ ուղարկել Հայաստանի բոլոր իշխանավորներին: Շատ ջիգյարով քույր, մորաքույր եւ սանամեր Թամարը կարճ ժամանակ անց հաստատ պիտի ավստաս, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամում հարազատներից մեկնումեկի փոխարեն պետք է մի մասնագետի աշխատանքի ընդունել՝ գոնե իրավաբանի, որ իրեն հարկ եղած դեպքում փրկեր ծիծաղելի վիճակների մեջ հայտնվելուց:

Եթե կարճ փորձենք նեկայացնել Թամարի բողոքի էությունը, ապա ստացվում է, որ նա պահանջում է պատժել Հրանուշ Հակոբյանին՝ իրեն ապօրինություններ անելու ազատությունից զրկելու համար: Նախ՝ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված բողոքի մասին: Տիկին Թամարը Աղվան Հովսեփյանից պահանջում է կարգի հրավիրել սփյուռքի նախարարին, ով ի պաշտոնե լինելով հիմնադրամի նախագահը, ի դեպ, միանգամայն իրավասու էր հրավիրել եւ անցկացնել

հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: 2010 թվականի դեկտեմբերի 28-ին նախարարությունում կայացել է հոգաբարձուների խորհրդի նիստը, եւ 22 մասնակիցները որոշել են «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամին 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվող 18,6 միլիոն դրամից 12 միլիոնը հատկացնել ծրագրերի իրականացմանը, իսկ մնացյալը տրամադրել որպես հիմնադրամի պահպանման ծախսեր: Հատկանշականն այն է, որ Թամարը նիստի լուրն առնելուն պես՝ հիվանդացել է եւ գնացել, ամիս ու կես պառկել հիվանդանոցում, միաժամանակ ապսպրելով, որ հիմնադրամից ոչ ոք չմասնակցի նիստին: Հավանաբար, ենթադրել է, որ այդպիսով նիստը «լեզհիտիմ» չի լինի: Հիմա Թամարը սրտատրոփ սպասում է, որ գլխավոր դատախազը սաստի սփյուռքի նախարարին, որ նա իրեն զրկել է ազգուտակին լիուրով աշխատավարձ բաժանելու հնարավորությունից: Սակայն եթե Թամարի բարեկամների մեջ իրավաբան լիներ, նախքան դատախազություն դիմելը կծանոթանար որոշ փաստաթղթերի հետ, օրինակ՝ կտեղեկանար, որ սփյուռքի նախարարը առաջնորդվել է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին օրենքի համապատասխան հավելվածով, «Հիմնադրամների մասին» օրենքով, ինչպես նաեւ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի կանոնադրությամբ եւ ըստ այդմ՝ գումարների մի մասը փոխանցել նախարարության ենթակայությամբ գործող «Հայրենիք-Սփյուռք» ՊՈԱԿ-ին՝ ստանալով կառավարության համաձայնությունը: Նույն օրենքով, ի դեպ, հիմնադրամի գործադիր տնօրենը պարտավոր էր ենթարկվել հոգաբարձուների խորհրդի որոշմանը՝ ներկայացնելով նախահաշիվ եւ ապա կնքելով պայմանագիր: Թամարը, սակայն, գերադասել է վիճարկել խորհրդի որոշումը՝ գլխի չընկնելով, որ այս կերպ բացահայտվում են մի շարք հանգամանքներ՝ իր պրոֆեսիոնալ անհամապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին, ազգուտակին հարմարավետ աշխատանքների տեղավորելը եւ հովանավորչությունը, հիմնադրամին հատկացվող գումարներն անարդյունավետ ծախսելը, ավելի կոնկրետ՝ աշխատավարձերի եւ հավելվածարների տեսքով գրպանելը: Ընդհանրապես, արժեր, որ Թամարը մի թեթեւ աչքի տակով անցկացներ որոշ օրենքներ, որպեսզի հասկանար, որ, օրինակ, հիմնադրամը սովորաբար ինքն է գումարներ հայթայթում իր ծրագրերն իրագործելու համար, այլ ոչ թե հույսը դնում է պետությունից ստացվող պատրաստի գումարների վրա:

Մերժ Սարգսյանին ուղղած նամակում Թամարը տրտնջացել է, որ իրեն առաջարկում են առանց մրցույթի պայմանագիր կնքել ինչ-ինչ կազմակերպության հետ: Այ սա հատկապես է հետաքրքիր: Որովհետեւ, ըստ որոշ լուրերի, մրցույթները հենց Թամարն է տնավարի արել: Խոսքը «Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման եւ անցկացման մասին» դրամաշնորհային ծրագրի մասին է: Դրան մենք դեռ կանդրադառնանք՝ ավելի հանգամանակից: Իսկ հիմա նշենք, որ Թամարը Հրանուշ Հակոբյանից բողոքել է նաեւ վարչապետին, որի վերահսկողական ծառայությունը ներկայումս քննություն

է անցկացնում: Դա որ հաստատ չպետք է աներ. այս դեպքերի համար է, որ ասում են՝ ձեռքը մտցրել է մեղվի բունը:

Աշխատանքային օրենսդրությանը հղումներ անող Թամարը 2010 թվականին տեղի ունեցած «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային 4-րդ փառատոնի միայն «Կատարողական արվեստի օրեր» ծրագրի շրջանակներում հիմնադրամի աշխատակիցներին «արտաժամյա» աշխատանքների դիմաց բարի մորաքրոջ առատաձեռնությամբ այնքան գումարներ է հավելագրել, որ իրեն չպետք է թույլ տար՝ պարզ զգուշությունից ելնելով, չխոսելով այլևս իրավունքի եւ օրինավորության մասին: Իրականում իր պարտավորության համաձայն մեկ շաբաթ աշխատելու դիմաց Թամարն ինքն իրեն պարգևատրել է 2. 631.850 դրամով (կայքերից մեկի տեղեկության մեջ տեղ գտած սխալ թիվը երեկ կրկնվել էր մեր լուրի մեջ): Քնարիկ Պողոսյանը, որ Թամարի հարազատ քույրն է, հիմնադրամում երկրորդ մարդը՝ նա էլ աշխատակազմի ղեկավարն է, եւ փառատոնի շտաբի ղեկավարը, Թամարի քույրն ահա, փառատոնի մի քանի օրերի ընթացքում ընտանեկան բյուջեն հարստացրել է 196.430 դրամով, Թամարի քրոջ աղջիկը՝ Քրիստինե Վարդանյանը՝ մոտ 300 հազարով, բարեկամուհին՝ Զարուհի Դադայանը, որը ձեւակերպված է որպես հիմնադրամի գլխավոր մասնագետ, 504.365-դրամով է հարստացել: Ընդհանուր առմամբ՝ շուրջ 5 միլիոն դրամ Թամարը նվիրել է աշխատակազմին կամ, որ նույնն է՝ ծանոթ-բարեկամներին: «Քանի Թամար մորքուրը «սաղ ա», մորքուրի էրեխեքը պիտի շոկոլադ ուտեն»՝ այս շրջանակներում է աշխատել եւ գործել Թամարի հիմնադրամը. միայն քույրը կարող է ինքն իրեն վտանգելով եւ իրեն վստահված հիմնադրամի գումարները տարբեր տողերի տակ դուրս գրելով՝ քրոջը նվիրել 2 միլիոն դրամ ու մոտ մի միլիոնի չափ էլ պարգևատրում տալ մեկ շաբաթվա չարքաշ աշխատանքի համար: Հիմա պարզ է, թե ինչու է աղմկում Թամարը. ախր 2008 թվականին 138 միլիոն դրամով 12 միջոցառում է կազմակերպել, իսկ 2010-ին չեն թողել, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթը» լրիվ վերածվի «Մեկ Թամար, մեկ ազգուտակ»-ի:

Հ.Գ. Հաջորդիվ կանդրադառնանք նաեւ Թամար Պողոսյանի՝ այսօր կայանալիք ասուլիսին: Նկատենք, որ Թամար Պողոսյանի հանրային ակտիվության սաստկանալուն զուգընթաց՝ ծագում է նրան իր ազգականի՝ Դավիթ Հակոբյանի կուսակցությունում տեսնելու միտքը: Քանի որ ՕԵԿ-ն արդեն ունի «ֆիքսված» «էգ առյուծ», հին ՕԵԿ-ական եռանդով Թամարը կարող է դառնալ մարքսիստների «էգ առյուծը»:



## ԿԱՐԻՆԵ ԱՇՈՒՂՅԱՆ

### «Չորրորդ Ինքնիշխանություն»

Հայրենադարձներ

### Հայրենիքում՝ Հայրենիքի համար

2011-04-11

**-Պարոն Հովնանյան, որտեղի՞ց են Ձեր արմատները, բացի արյան կանչից հոգևոր ինչ կապ էք տեսնում Ձեր եւ Ձեր նախնիների միջև:**

-Հայրս՝ Ստեփան Հովնանյանը, բնիկ մալաթիացի էր, հրաշքով էր փրկվել Ցեղասպանությունից, մայրս՝ Եսթեր Հովնանյանը /Ալմաջյան/, սեբաստացի էր՝ Եղեռնի վերապրողներից մեկը: Նրանք հաստատվել էին Իրաքի Քերքուք քաղաքում: Հայրս բարեգործ էր, ստեղծող, աշխատող շինարար. նա Քերքուքի հայկական եկեղեցուն կից Թարգմանչաց դպրոցը նվիրել էր գաղութին: Մայրս միայն ՄԱՅՐ էր...Նա մեծ հոգեբան էր, իսկազի, խորագետ, իմաստուն...Երբ հայրս վարձատրում էր իր աշխատողներին, մայրս էլ դրամ էր տալիս թուրք մուրացիկներին, ովքեր գալիս էին աշխատողների մոտ աշխատավարձի օրերին:

Երբ հայրս հարցնում էր, թե ինչու է նրանց՝ թուրքերին, դրամ տալիս, մայրս պատասխանում էր. «Որ միշտ մուրացիկ մնան»: Նախնիներիս հետ ունեցած կապը Հայրենիքի կարոտն է. կան երկու տեսակի հայեր՝ նրանք, ովքեր կապրին Հայաստանի մեջ, եւ նրանք, ովքեր կապրին Հայաստանի կարոտով: Նրանք, ովքեր ապրում են Հայաստանում, նման են անտառում ապրողներին, որոնք ծառերը չեն տեսնում հաճախ: Իմ նախնիների կարոտն է, որ փոխանցվել է ինձ, այն կարոտը, որ մեկ անուն ունի՝ Հայրենիք: Ամենքս էլ մեծ գործեր ենք արել՝ հայրս, մայրս, եղբայրներս:

**-Դուք այն եզակի հայերից եք, որ իրենց բարեգործություններն առանց ի ցույց դնելու են կյանքի կոչում: Ի՞նչն է Ձեզ դրդում զբաղվելու բարեգործությամբ:**

-Ամբողջ հավատքը տասը պատվիրանների մեջ է: Ծնողներս պատվիրում էին մեզ Նարեկացի կարդալ, եկեղեցի հաճախել, ամուր հավատք ունենալ, կարեկից լինել ուրիշներին. իրենք միշտ այդպիսին էին: Աչքս միշտ տեսել է բարի գործերի հեղինակ հորս. ես այդպես եմ մտածել, ու այլ կերպ լինել չէր կարող:

Հիշում եմ՝ մի օր տեսա հորս դպրոցի տանիքի վրա ուսումնասիրում էր վիճակը: Նայեցի նրան ներքեից ու հպարտ զգացի, որովհետեւ ինչպես ասացի, հայրս այդ դպրոցը գնել էր եւ նվիրել երեխաներին, որ այլևս վարձակալությամբ չհաճախեին: Հետո զգացի, որ նա միայն իմ հայրը չէ, այլ՝ իմ բոլոր ընկերների, բոլոր այն երեխաների, ովքեր այդ դպրոց էին հաճախում: Հորս բարեգործությունն ինձ համար կյանքումս սովորած ամենամեծ դասն էր:

**-Ուրեմն Քերքուքն է Ձեր ծննդավայրը, մինչդեռ Հայրենիքը...**

-Այո, Քերքուքն է իմ ծննդավայրը. ծնվել եմ այնտեղ 1932 թվականին, իսկ Հայրենիքս Հայաստանն է: Գաղթական ծնողներս, հիմնավորվելով Քերքուքում, շինեցին իրենց բույնը, հիմնեցին իրենց օջախը: Բոլորը զարմանում էին, որ

գաղթական հայերը կարողացան ապրել, վերապրել, հայ մնալ, լեզու եւ հավատք պահել, իրենց երեխաների համար դպրոց ու եկեղեցի կառուցել, աճել, գորանալ, բազմանալ: Այդպիսին է Հայը:

**-Ինչպե՞ս հայտնվեցից Ամերիկայում եւ հանդիպեցիք տիկին Հասմիկին:**

-1952-ին դուրս եկա Իրաքից, ուղեւորվեցի Ամերիկա՝ Ֆիլադելֆիա՝ սովորելու, բարձրագույն կրթություն ստանալու: Ընտրեցի ֆիզիկոսի մասնագիտությունը: Այն ճկունություն է տալիս մտքին: Հետագայում փոխադրվեցի Նյու Ջերսի: Ատլանտիկ Սիթիում էլ հանդիպեցի իմ երկրորդ կեսին՝ Հասմիկ Պաղտոյանին, ով եկել էր Ամերիկա Երուսաղեմից՝ մանկավարժություն ուսանելու: Հրաշալի մտավորական Սեդրակ Պաղտոյանի եւ աննման հայուհի Սիրանույշ Քոպալյանի հինգ զավակներից երրորդն է Հասմիկը: Սեդրակ Պաղտոյանը Երուսաղեմի Թարգմանչաց վարժարանում ավագ ուսուցիչ է եղել: Հրաշքով ազատվելով Ցեղասպանությունից՝ եւ հաստատվելով Երուսաղեմում՝ տարիներ անց Պաղտոյանը վեց հարյուր էջանոց մի գիրք է հեղինակում այդ ոճրագործության մասին՝ «Երբ դրախտը դարձավ դժոխք» վերնագրով: 1959-ին ես եւ Հասմիկն ամուսնացանք հայկական եկեղեցում: Հետո ծնվեցին մեր երեխաները՝ Շանթը եւ Նինան. նրանք էլ կրթվեցին, ամուսնացան: Շանթը՝ Հիլդեյի հետ, Նինան՝ Արթուրի, ու մեզ պարզեցին հինգ հրաշալի թոռնիկներ:

**-Հայաստանն է Ձեր վերջին ու վերջնական հանգրվանը, թե՞ հնարավոր է, որ մի օր ինչ-ինչ հանգամանքներ ստիպեն Ձեզ հեռանալ Հայրենիքից:**

-Կուզեմ ապրել աշխարհի մեջ, ունենալ լավ բարեկամներ ամեն տեղ՝ աշխարհի բոլոր կողմերում: Հեռանա՞լ Հայաստանից... երբեք մտքովս չի անցել: Ես չեմ մոտեցել, որ հեռանամ:

**-Ո՞ւմ մտահոգումն էր <Վահագնի Թաղամասի> հիմնումը:**

-Հիմնել եմ ես. Իմ մտահոգումն է եղել, բայց անունը ես չեմ դրել: Ռեժիսոր Հարություն Խաչատրյանը առաջարկեց, ու երբ ես եկա, անունն արդեն դրված էր: Համայնքային ընդարձակ բնակավայրի տարածքը երեք հարյուրից ավելի նորակառույց տներից է բաղկացած եւ դեռ պիտի համալրվի նոր կառույցներով:

**-Ո՞վ է Ձեզ աջակցում կարևոր գործերում: Խոսքս եւ բարոյական, եւ ֆինանսական աջակցությանն է վերաբերում:**

-Բարոյապես, հոգեպես ինձ նեցուկ է հայ ժողուրդը, հայ մշակույթը: Ֆինանսական հարցերը ես եմ լուծում: Իսկ ընդհանրապես ինձ մեծ աջակցություն են ցուցաբերում աղջիկս, տղաս, փեսաս, նույնիսկ՝ թոռներս իրենց դրական լիցքերով:

Տիկնոջս՝ Հասմիկին, ամեն առավոտ համբուրում եմ, իսկ նա ինձ օրհնում է՝ասելով. «Հող բռնես, ոսկի դառնա», ու սկսվում է իմ աշխատանքային օրը:

**-Ի՞նչը կարող է Ձեզ ստիպել հրաժարվել Ձեր առաքելությունից:**

-Մահը, միայն մահը; Մինչև վերջին շունչս պիտի կառուցեմ, ստեղծեմ, բարեգործություն անեմ: Աստված ինձ դրա համար է շունչ ու հոգի տվել:

**Կարինե Ավագյան**